ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1»

ք. Երևան «21» 05 2019 թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վ. Բաբաջանյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Բեգլարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Սոցիալական ապահովության ծառայության վարչական շենքի և սոցիալական ապահովության տարածքային բաժինների ընթացիկ նորոգման աշխատանքները ՀՀ օրենսդրությանը համաձայն ապահովելով նաև աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 5 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-երաշխավորագրի (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 120 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող

շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներն են՝ առնվազն 1 տարվա երաշխիքային ժամկետ:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3050000 (երեք միլիոն հիսուն հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Սոցիալական ապահովության ծառայություն | «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ 02505511 | Հասցե՝ ք.Եղվարդ Պ.Սևակի 3/7 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ»ՓԲԸ Եղվարդի մ/ճ |
| Հ/Հ 900011556355 | Հ/Հ163228127540 |
| | ՀՎՀՀ 03309185 |
| ------------------------------ | ------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված թիվ 1
«21» 05 2019թ. կնքված
ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[1]*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| h/h | Աշխատանքի անվանումը | Չափման միավոր | Քանակ | Միավորի ընդ. արժ. /դրամ/ | Ընդհանուր արժեք /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | *Սոցիալական ապահովության պետական ծառայության վարչական շենքի շինարարական աշխատանքներ* | | | | |
| 1 | Գլխավոր մուտքի դռան սռնակի /պետլի/ փոխարինում | հատ | 4 | 1000 | 4000 |
| 2 | Գլխավոր մուտքի դռան փականի /բռնակներով/ փոխարինում | հատ | 1 | 15000 | 15000 |
| 3 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի լամինատե հատակի քանդում | մ$^2$ | 11 | 200 | 2200 |
| 4 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ$^2$ | 11 | 300 | 3300 |
| 5 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ$^2$ | 11 | 1800 | 19800 |
| 6 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ$^2$ | 11 | 6310 | 69410 |
| 7 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի պատերի ներկի մաքրում | մ$^2$ | 47 | 250 | 11750 |
| 8 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ$^2$ | 11 | 250 | 2750 |
| 9 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 47 | 1678 | 78866 |
| 10 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 11 | 1850 | 20350 |
| 11 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի շրիշակների փոխում | մ | 24 | 400 | 9600 |
| 12 | 1-ին հարկի թիվ 2 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| 13 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի լամինատե հատակի քանդում | մ$^2$ | 11 | 200 | 2200 |
| 14 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ$^2$ | 11 | 300 | 3300 |
| 15 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ$^2$ | 11 | 1800 | 19800 |
| 16 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ$^2$ | 11 | 6310 | 69410 |
| 17 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի պատերի ներկի մաքրում | մ | 45 | 250 | 11250 |
| 18 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ$^2$ | 11 | 250 | 2750 |
| 19 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 45 | 1678 | 75510 |
| 20 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 11 | 1850 | 20350 |
| 21 | 1-ին հարկի թիվ 7 սենյակի շրիշակների փոխում | մ | 14 | 400 | 5600 |
| 22 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի լամինատե հատակի քանդում | մ$^2$ | 7.8 | 200 | 1560 |
| 23 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ$^2$ | 7.8 | 300 | 2340 |
| 24 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ$^2$ | 7.8 | 1800 | 14040 |
| 25 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ$^2$ | 7.8 | 6310 | 49218 |

[1] *Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 26 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 42 | 250 | 10500 |
| | 27 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 7.8 | 250 | 1950 |
| | 28 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 42 | 1678 | 70476 |
| | 29 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 7.8 | 1850 | 14430 |
| | 30 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի շրիշակների փոխում | մ | 12 | 400 | 4800 |
| | 31 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| | 32 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի պլաստմասե պատուհանագոգի հանում (1.45մ x 0.5մ) | հատ | 1 | 500 | 500 |
| | 33 | 1-ին հարկի թիվ 8 սենյակի պլաստմասե պատուհանագոգի տեղադրում (1.45մ x 0.5մ) | հատ | 1 | 3500 | 3500 |
| | 34 | 2-րդ հարկի միջանցքի լամինատե հատակի քանդում | մ² | 46.5 | 200 | 9300 |
| | 35 | 2-րդ հարկի միջանցքի ց/ա շերտի քանդում 30մմ հաստությամբ | մ² | 46.5 | 300 | 13950 |
| | 36 | 2-րդ հարկի միջանցքի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 46.5 | 1800 | 83700 |
| | 37 | 2-րդ հարկի միջանցքի նոր լամինատե հատակի տեղադրում | մ² | 46.5 | 6310 | 293415 |
| | 38 | 2-րդ հարկի միջանցքի շրիշակների փոխում | մ | 54 | 400 | 21600 |
| | 39 | 2-րդ հարկի միջանցքի երկաթե անցումների տեղադրում | մ | 5.6 | 2000 | 11200 |
| | 40 | 2-րդ հարկի թիվ 11 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 53.2 | 250 | 13300 |
| | 41 | 2-րդ հարկի թիվ 11 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 53.2 | 1678 | 89269.6 |
| | 42 | 2-րդ հարկի թիվ 11 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 14.4 | 250 | 3600 |
| | 43 | 2-րդ հարկի թիվ 11 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 14.4 | 1850 | 26640 |
| | 44 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի լամինատե հատակի քանդում | մ² | 25 | 200 | 5000 |
| | 45 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ² | 25 | 300 | 7500 |
| | 46 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 25 | 1800 | 45000 |
| | 47 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ² | 25 | 6310 | 157750 |
| | 48 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 70.8 | 250 | 17700 |
| | 49 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 25 | 250 | 6250 |
| | 50 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 70.8 | 1678 | 118802.4 |
| | 51 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 25 | 1850 | 46250 |
| | 52 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի շրիշակների փոխում | մ | 22 | 400 | 8800 |
| | 53 | 2-րդ հարկի թիվ 12 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| | 54 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի լամինատե հատակի քանդում | մ² | 19.5 | 200 | 3900 |
| | 55 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ² | 19.5 | 300 | 5850 |
| | 56 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 19.5 | 1800 | 35100 |
| | 57 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ² | 19.5 | 6310 | 123045 |
| | 58 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 60 | 250 | 15000 |
| | 59 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 19.5 | 250 | 4875 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 60 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 60 | 1678 | 100680 |
| 61 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 19.5 | 1850 | 36075 |
| 62 | 2-րդ հարկի թիվ 13 սենյակի շրիշակների փոխում | մ | 20 | 400 | 8000 |
| 63 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի լամինատե հատակի քանդում | մ² | 42 | 200 | 8400 |
| 64 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ² | 42 | 300 | 12600 |
| 65 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 42 | 1800 | 75600 |
| 66 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ² | 42 | 6310 | 265020 |
| 67 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 105.6 | 250 | 26400 |
| 68 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 42 | 250 | 10500 |
| 69 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 105.6 | 1678 | 177196.8 |
| 70 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 42 | 1850 | 77700 |
| 71 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի շրիշակների փոխում | մ | 21 | 400 | 8400 |
| 72 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| 73 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի պլաստմասե պատուհանագոգի հանում (1.45մ x 0.5մ) | հատ | 2 | 500 | 1000 |
| 74 | 2-րդ հարկի թիվ 15 սենյակի պլաստմասե պատուհանագոգի տեղադրում (1.45մ x 0.5մ) | հատ | 2 | 3500 | 7000 |
| 75 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի լամինատե հատակի քանդում | մ² | 16 | 200 | 3200 |
| 76 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ² | 16 | 300 | 4800 |
| 77 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 16 | 1800 | 28800 |
| 78 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ² | 16 | 6310 | 100960 |
| 79 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի պատերի ներկի մաքրում | մ² | 55 | 250 | 13750 |
| 80 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ² | 16 | 250 | 4000 |
| 81 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 55 | 1678 | 92290 |
| 82 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ² | 16 | 1850 | 29600 |
| 83 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի շրիշակների փոխում | մ | 16.8 | 400 | 6720 |
| 84 | 2-րդ հարկի թիվ 16 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| 85 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի լամինատե հատակի քանդում | մ² | 11.4 | 200 | 2280 |
| 86 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ² | 11.4 | 300 | 3420 |
| 87 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ² | 11.4 | 1800 | 20520 |
| 88 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ² | 11.4 | 6310 | 71934 |
| 89 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի դռան սռնակի /պետլի/ փոփոխություն | հատ | 4 | 1500 | 6000 |
| 90 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի շրիշակների փոխում | մ | 16.8 | 400 | 6720 |
| 91 | 2-րդ հարկի թիվ 18 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 92 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի լամինատե հատակի քանդում | մ$^2$ | 21 | 200 | 4200 |
| 93 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի ց/ա 30մմ շերտի քանդում | մ$^2$ | 21 | 300 | 6300 |
| 94 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի ց/ա շերտի իրականացում 30մմ հաստությամբ | մ$^2$ | 21 | 1800 | 37800 |
| 95 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի նոր լամինատե հատակի իրականացում | մ$^2$ | 21 | 6310 | 132510 |
| 96 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի պատերի ներկի մաքրում | մ$^2$ | 64 | 250 | 16000 |
| 97 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ$^2$ | 21 | 250 | 5250 |
| 98 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 64 | 1678 | 107392 |
| 99 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 21 | 1850 | 38850 |
| 100 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի շրիշակների փոխում | մ | 19 | 400 | 7600 |
| 101 | 2-րդ հարկի թիվ 19 սենյակի երկաթե անցումների տեղադրում | մ | 0.8 | 2000 | 1600 |
| 102 | 3-րդ հարկի թիվ 22 սենյակի պատերի ներկի մաքրում | մ$^2$ | 70 | 250 | 17500 |
| 103 | 3-րդ հարկի թիվ 22 սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 70 | 1678 | 117460 |
| 104 | 2-րդ հարկի թիվ 22 սենյակի առաստաղի ներկի մաքրում | մ$^2$ | 24 | 250 | 6000 |
| 105 | 2-րդ հարկի թիվ 22 սենյակի առաստաղի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 24 | 1850 | 44400 |
| 106 | Սպասարկող անձնակազմի սենյակի պատերի ներկի մաքրում | մ$^2$ | 40 | 250 | 10000 |
| 107 | Սպասարկող անձնակազմի սենյակի պատերի ներկում, հարդարումով լատեքսով | մ$^2$ | 40 | 1678 | 67120 |
| 108 | Սպասարկող անձնակազմի սենյակի լվացարանի ծորակի ապամոնտաժում | հատ | 1 | 300 | 300 |
| 109 | Սպասարկող անձնակազմի սենյակի լվացարանի միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 1 | 100 | 100 |
| 110 | Սպասարկող անձնակազմի սենյակի լվացարանի ապամոնտաժում | հատ | 1 | 1000 | 1000 |
| 111 | Սպասարկող անձնակազմի սենյակի նոր լվացարանի տեղադրում` ներառյալ նոր լվացարանը | հատ | 1 | 23300 | 23300 |
| 112 | Սպասարկող անձնակազմի սենյակի լվացարանի ծորակի տեղադրում` ներառյալ նոր ծորակը | հատ | 1 | 3885 | 3885 |
| 113 | Սպասարկող անձնակազմի սենյակի լվացարանի միացման խողովակների տեղադրում` ներառյալ միացման խողովակը | հատ | 1 | 1665 | 1665 |
| 114 | Սպասարկող անձնակազմի սենյակի պարկետի քանդում | մ$^2$ | 16 | 800 | 12800 |
| 115 | Սպասարկող անձնակազմի սենյակի ց/ա շերտի քանդում 30մմ հաստությամբ | մ$^2$ | 19.2 | 300 | 5760 |
| 116 | Սպասարկող անձնակազմի սենյակի սալիկապատում /մետլախ/ | մ$^2$ | 16 | 8400 | 134400 |
| 117 | Սպասարկող անձնակազմի սենյակի սալիկապատում /կաֆել/ | մ$^2$ | 3.2 | 8400 | 26880 |
| 118 | Սպասարկող անձնակազմի սենյակի շրիշակների փոխում /մետլախ/ | մ | 18 | 400 | 7200 |
| 119 | 1-ին, 2-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների ծորակների ապամոնտաժում | հատ | 6 | 300 | 1800 |
| 120 | 1-ին, 2-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 6 | 100 | 600 |
| 121 | 1-ին, 2-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների ծորակների տեղադրում` ներառյալ նոր ծորակները | հատ | 6 | 3885 | 23310 |
| 122 | 1-ին, 2-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների միացման խողովակների տեղադրում` ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 6 | 1665 | 9990 |
| 123 | 1-ին, 2-րդ և 4-րդ հարկերի սանհանգույցների զուգարանակոնքի մեղանիզմ /լողակ/ | հատ | 6 | 7000 | 42000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 124 | Մի շարք սենյակների աթոռների հետնամասի պատերի լամինատե վահանակների փոխում | մ | 26 | 1570 | 40820 |
| | 125 | 4-րդ հարկի լուսատուների ապամոնտաժում /երկ. 120սմ/ | հատ | 14 | 800 | 11200 |
| | 126 | 4-րդ հարկի լուսատուների տեղադրում /երկ. 120սմ/ | հատ | 14 | 8655 | 121170 |
| | 127 | Մի շարք սենյակների մետաղապլաստե /եվրո/ պատուհանների բռնակների փոխարինում | հատ | 15 | 1500 | 22500 |
| | 128 | Շինարարական աղբի հավաքում և բարձում /ձեռքով/ ավտոմեքենա | $մ^3$ | 9 | 3022 | 27198 |
| | 129 | Շինարարական աղբի տեղափոխում 13կմ | կմ | 1 | 3000 | 3000 |

*Վանաձորի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի շինարարական աշխատանքներ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 4 | 300 | 1200 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 8 | 100 | 800 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 4 | 3885 | 15540 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 8 | 1665 | 13320 |
| Դռների ինքնակառավարվող մեխանիզմներ /շվեցար/ | հատ | 4 | 12000 | 48000 |
| Զուգարանակոնքի մեխանիզմ /լողակ/ | հատ | 4 | 7000 | 28000 |
| Մի շարք սենյակների մետաղապլաստե /եվրո/ դռների բռնակների փոխարինում | հատ | 10 | 1500 | 15000 |

*Վարդենիսի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 4 | 300 | 1200 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 4 | 3885 | 15540 |
| Սանհանգույցների դռների փականների /բռնակներով/ փոխարինում՝ ներառյալ դռների նոր փականները /բռնակներով/ | հատ | 4 | 2000 | 8000 |
| Դռների ինքնակառավարվող մեխանիզմներ /շվեցար/ | հատ | 1 | 12000 | 12000 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 4 | 100 | 400 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 4 | 1665 | 6660 |

*Դավթաշենի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 4 | 300 | 1200 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 4 | 3885 | 15540 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 4 | 100 | 400 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 4 | 1665 | 6660 |

*Գյումրու սոցիալական ապահովության տարածքային բաժնի ընթացիկ նորոգման աշխատանքներ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 2 | 300 | 600 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 2 | 3885 | 7770 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 2 | 100 | 200 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 2 | 1665 | 3330 |

*Մաշտոցի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 4 | 300 | 1200 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 4 | 3885 | 15540 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 3 | 100 | 300 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 3 | 1665 | 4995 |
| *Սիսիանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | |
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 2 | 300 | 600 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 2 | 3885 | 7770 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 2 | 100 | 200 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 2 | 1665 | 3330 |
| Ներսի դռների փականների /բռնակներով/ փոխարինում՝ ներառյալ դռների նոր փականները /բռնակներով/ | հատ | 3 | 2000 | 6000 |
| Զուգարանակոնքի մեխանիզմ /լողակ/ | հատ | 2 | 7000 | 14000 |
| *Չարենցավանի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 2 | 300 | 600 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 2 | 3885 | 7770 |
| *Արմավիրի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | |
| Ներսի դռների փականների /բռնակներով/ փոխարինում՝ ներառյալ դռների նոր փականները /բռնակներով/ | հատ | 4 | 2000 | 8000 |
| Զուգարանակոնքի մեխանիզմ /լողակ/՝ ներառյալ տեղադրումը | հատ | 4 | 7000 | 28000 |
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 3 | 300 | 900 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 3 | 3885 | 11655 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 3 | 100 | 300 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 3 | 1665 | 4995 |
| *Էրեբունի-Նուբարաշենի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | |
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 4 | 300 | 1200 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 4 | 3885 | 15540 |
| Լվացարանների միացման խողովակների ապամոնտաժում | հատ | 4 | 100 | 400 |
| Լվացարանների միացման խողովակների տեղադրում՝ ներառյալ նոր միացման խողովակները /60սմ/ | հատ | 4 | 1665 | 6660 |
| Ներսի դռների փականների /բռնակներով/ փոխարինում՝ ներառյալ դռների նոր փականները /բռնակներով/ | հատ | 3 | 2000 | 6000 |
| *Եղվարդի սոցիալական ապահովության համալիր կենտրոնի ընթացիկ նորոգման աշխատանքներ* | | | | |
| Լվացարանների ծորակի ապամոնտաժում | հատ | 2 | 300 | 600 |
| Լվացարանների ծորակի տեղադրում՝ ներառյալ նոր ծորակները | հատ | 2 | 3885 | 7770 |
| | | | | |
| Ընդամենը | | | | 4503023.8 |
| Շահույթ 11% | | | | 495332.618 |
| Ընդամենը | | | | 4998356.418 |
| ԱԱՀ 20% | | | | 999671.284 |
| **Ընդամենը** | | | | 5998027.702 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան Նալբանդյան 13 և ՍԱԾ տարածքային կենտրոնների հասցեում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Սոցիալական ապահովության ծառայություն<br>ՀՎՀՀ 02505511<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011556355 | «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ<br>Հասցե ` ք.Եղվարդ Պ.Սևակի 3/7<br>«Հայէկոնոմբանկ»ՓԲԸ Եղվարդի մ/ճ<br>Հ/Հ163228127540<br>ՀՎՀՀ 03309185 |
| ----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ----------------------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

*Հավելված թիվ 2*
*« 21 » 05  2019թ. կնքված*
**ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1** *ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Սոցիալական ապահովության համալիր կենտրոնների շինարարական և ընթացիկ վերանորոգման աշխատանքները հետևյալ համայնքներում` Վանաձոր, Վարդենիս, Գյումրի,Սիսյան, Չարենցավան,Արմավիր,Եղվարդ,Դավթաշեն, Մաշտոց, Էրեբունի-Նուբարաշեն | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 17.06.2019թ |
| 2 | Սոցիալական ապահովության պետական ծառայության վարչական շենքի շինարարական աշխատանքները | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | 16.08.2019թ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
Հասցե ` ք.Եղվարդ Պ.Սևակի 3/7
«Հայէկոնոմբանկ»ՓԲԸ Եղվարդի մ/ճ
Հ/Հ163228127540
ՀՎՀՀ 03309185

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 21 » 05 2019թ. կնքված*
**ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1** *ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ղ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 45461100-1 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ | - | - | - | - | 1067500 | 1067500 | 1830000 | 1830000 | 1830000 | 3050000 | 3050000 | 3050000 | 3050000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ
Հասցե ` ք.Եղվարդ Պ.Սևակի 3/7
«Հայէկոնոմբանկ»ՓԲԸ Եղվարդի մ/ճ
Հ/Հ163228127540
ՀՎՀՀ 03309185

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
« 21 » 05 *2019թ. կնքված*
**ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1** *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
hh ___________________________
hվhh _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
hh ___________________________
hվhh _________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «          » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «                    » 20     թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
« 21 » 05 2019թ. կնքված
ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ___________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| ստորագրություն | ստորագրություն |

«21» 05 2019թ. *կնքված*
ՍԱԾ ԳՀԱՇՁԲ-19/1 *ծածկագրով պայմանագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ- ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ**
շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության

1. ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման 26-րդ կետի համաձայն`սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը իրականացնում է կապալառուն` հաստատված նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջի, շինարարական աշխատանքների համապատասխանության վերաբերյալ ՀՀ կառավարության 02.07.2009թ թիվ 775-Ն և 777-Ն որոշումներով սահմանված պահանջների ապահովման պայմանով:

2. Սույն տեխնիկական բնութագիր-երաշխավորագրով Կապալառուի համար առաջանում են տեխնիկական հսկողության պարտավորությունների կատարման գործառույթներ, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ` այդ թվում նաև ՀՀ կառավարության 02.07.2012թ թիվ 775-Ն որոշմամբ հաստատված կարգի V բաժնով:

3. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:

4. Տեխնիկական վերահսկողի հիմնական պարտականություններն են`

- ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը շինարարական նորմերին և կանոններին:
- հաստատել և վերահսկել աշխատանքների իրականացման ծրագիրը,
- ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Բացառել այն նյութերի օգտագործումը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,
- վերահսկել ե գնահատել շինարարական աշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների ավարտը` համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի, կատարել այլ աշխատանքների իրականացում, որոնք կապված են Պայմանագրի իրականացման հետ,
- ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,
- ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,
- կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են շինարարական պայմանագրի իրականացման շրջանակում: Հաստատել ամսական վճարման հավաստագրերը, եթե աշխատանքները կատարվել են որակով և անհրաժեշտ ծավալով,
- գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,
- հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինարարական աշխատանքներն անվտանգ իրականացնելու, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,
- կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր):

«Կարպ-Գագ-Ռադ»ՍՊԸ տնօրեն Համլետ Բեգլարյան
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)